Արձանագրություն N 4

«ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/6ՀԻԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 3 փետրվարի 2020թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Դիլանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Ասատրյան և Խ.Ծառուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

I. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/6ՀԻԾ» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության հիմնավորման փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

(Լ.Դիլանյան)

1.1. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/6ՀԻԾ» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Միլենիում դեվելոփմենթ>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 01.02.2020թ:

1.2. Ընկերության կողմից «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/6ՀԻԾ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության հիմնավորման փաստաթղթերը ներկայացվել են 31.01.2020թ-ին:

1.3. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/6ՀԻԾ» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

(Լ.Դիլանյան)

1.3.1 «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/6ՀԻԾ» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Միլենիում դեվելոփմենթ>> ՍՊԸ-ի կողմից որակավորման հիմնավորման փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում: Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են մասնակցի կողմից ներկայացված որակավորման հիմնավորման փաստաթղթերը, և արձանագրվել է դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

II. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/6ՀԻԾ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու և ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

(Լ.Դիլանյան)

2.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի No. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝ «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/6ՀԻԾ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 2020թ-ի հունվարի 29-ին հարցում է ուղարկվել ՀՀ ԿԱ ՊԵԿ պահանջվող էլեկտրոնային հասցեներին, և ներկայացվել է «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/6ՀԻԾ» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Միլենիում դեվելոփմենթ>> ՍՊԸ-ի մասին պահանջվող տեղեկատվությունը: ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունը ստացվել է հունվարի 31-ին, մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Լ.Դիլանյան)

3.1. Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակից ճանաչել <<Միլենիում դեվելոփմենթ>> ՍՊԸ-ին՝ գնային և ոչ գնային պայմաններին համապատասխանող և բավարար գնահատված հայտ ներկայացրած միակ մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

բ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

IV. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

(Լ.Դիլանյան)

4.1. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/6ՀԻԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, ք. Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում, 7-րդ հարկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լիլիթ Դիլանյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Տաթևիկ Ասատրյան _____

Խորեն Ծառուկյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Հարությունյան _____